-ԿՅ-, -ՇՅ- ունեցող ցեղանունների համառոտած հավաքական ձևից՝ պատկանելության ցուցիչի միջոցով: Եղիշեի առաջին ցուցակում հիշատակված ,,զղուար'', ,,խրսան'', ,,փախս'', ,,փոսխ'', ,,փիլքուան'' ցեղանունները համապատասխանում են հիշյալ սկզբունքին և երկրորդ ցուցակում հենց դրանք էլ, թերևս, արտացոլված են ,,խիքիովան'' հավաքական անվամբ:

7. Վաղ հայկական աղբյուրներում հիշատակված աղվանական ցեղանունների և առկա լեզգիալեզու խմբերի էթնանվանահամակարգի վերոհիշյալ բաղդատությունը ցույց է տալիս, որ աղվանական բազմաթիվ ցեղախմբերի նախնական ցեղանունները, ինչպես նաև դրանց կրողների հետագա սերունդները պահպանվել են ի դեմս արտաքին աշխարհին մեծ մասամբ այլ անուններով հայտնի էթնիկ հանրությունների: Բուն Աղվանքի տարածքում հետագայում բնակավորված թյուրքալեզու խմբերը, ըստ էության, չնչին չափով են միայն ժուլել երկրի նախկին տերերին. վերջիններս զոյատևել են իրենց լեզուների, մշակույթի ավանդական ձևերի բնական զարգացման, էթնանունների պահպանման շրջանակներում:

Կ.Ռ.ԲԱՋԵՑԱՆ
ՀԱԻ

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

1. Հայկական միջնադարյան ժեռագրային մանրանկարչությունը հայ կերպարվեստի ուշագրավ ճյուղերից է: Այն բազմիցս գրավել է հայ և օտարազգի արվեստաբանների ուշադրությունը, սակայն ազգագրորեն տակավին չի ուսումնասիրված, միայն երբեմն հպանցիկ են դրան անդրադարձել: Մանրանկարները, լինելով յուրօրինակ սկզբնաղբյուր բազմազան տեղեկություններ են պարունակում միջնադարյան հայ արվեստի, թատրոնի, արհեստների և կենցաղի վերաբերյալ, որոնց ներկայացմանն էլ հենց վերաբերվում է Ա.Գևորգյանի ,,Արհեստները և կենցաղը հայկական մանրանկարներում'' ալբոմը:

2. Հայկական միջնադարյան ասեղնագործության առարկայական նմուշների գրեթե բացակայության պայմաններում մանրանկարները, ի թիվս ոստայնանկության ճյուղերի՝ կտավագործության և գորգագործության,

շատ արժեքավոր պատկերային և նկարագրական տվյալներ են պարունակում նաև ասեղնագործության վերաբերյալ:

3. Մանրանկարներում առկա ասեղնագործ իրերի բազմազանությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու ասեղնագործության երեք խումբ՝ աշխարհիկ տարազի, եկեղեցական հանդերձների ու սպասքի և կենցաղային իրերի, ըստ այդմ, անհամեմատ սակավ են աշխարհիկ տարազին, մանավանդ հասարակ ժողովրդի ասեղնագործությանը վերաբերող տվյալները, եղածն էլ համեստագույն նմուշներ են: Մինչդեռ վերնախավի՝ արքայական, իշխանական տների ներկայացուցիչների հագուստների ասեղնագործությունն ավելի ամբողջական է ներկայացված և խիստ արժեքավոր է: Ավելի հաճախ հանդիպում են եկեղեցական ասեղնագործության և կենցաղային իրերի պատկերներ՝ հանուր բազմազանությամբ, որոնք վկայում են ասեղնագործության արվեստի լայն տարածվածությունը միջնադարյան Հայաստանում:

4. Հայկական մանրանկարչությունը բացառիկ աղբյուր է հատկապես միջնադարյան ասեղնագործության տեխնիկական, որակական, գունային և զարդանախշային նրբությունները հետազոտելու առումով, մի բան, որը չի կարող տալ գրավոր աղբյուրը: Ըստ այդ տվյալների կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանում /իհարկե, վերնախավային և եկեղեցական միջավայրում/ տարածված է եղել ոսկեթել, արծաթաթել և մետաքսահյուս ասեղնագործությունը, որը հանդիպում է ինչպես առանձին տարրերով, այնպես էլ որպես մեկ միասնական համալիր: Ինչպես ակներև է դառնում բուն նյութերից, միջնադարյան ասեղնագործության զարդանախշերում առավել սիրվածը և գործածականը եղել են ոճավորված երկրաչափական, ապա բուսական զարդանախշերը: Մյուս զարդանախշերի վերաբերյալ շատ քիչ են կամ իսպառ բացակայում են նյութերը:

Այսպիսով, հայկական միջնադարյան մանրանկարչության քննությունը թույլ է տալիս ասելու, որ ասեղնագործությունը միջնադարյան Հայաստանում եղել է ամենատարածված և հարգի արհեստներից, որպիսի հանգամանքը վկայվում է նաև այլ աղբյուրներով: